

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ N 2/3.1

յոթը նոյեմբերի 2013 թվականի

ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի կանոնադրության 30-րդ կետի 3-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 3-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել Ձեռնարկությունների հետ ֆակուլտետի համագործակցության խորհրդի կանոնակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԵՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Ա. Հ. ՄԻՄՈՆՅԱՆ

Ձեռնարկությունների հետ ֆակուլտետի համագործակցության խորհրդի

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

1. Ձեռնարկությունների հետ ԵՊՀ ֆակուլտետի համագործակցության խորհուրդը (այսուհետ՝ խորհուրդ) ԵՊՀ ֆակուլտետի դեկանին կից խորհրդակցական մարմին է, որի կազմը հաստատվում է ԵՊՀ ռեկտորի հրամանով:

2. Խորհրդի նպատակներն ու խնդիրներն են՝

ա) ընդլայնել ՀՀ աշխատաշուկայում զգալի դերակատարություն ունեցող ՀՀ պետական, մասնավոր, ընկերությունների և ձեռնարկությունների, ինչպես նաև միջազգային տարբեր կազմակերպությունների (այսուհետ՝ ձեռնարկությունների) հետ ֆակուլտետի համագործակցության շրջանակը և ապահովել բազմակողմանի փոխգործակցություն,

բ) մշակել և իրականացնել ֆակուլտետի ուսանողների կարիերայի խնդիրներին առնչվող ծրագրեր և միջոցառումներ,

գ) նպաստել Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդին կից ձեռնարկությունների հետ համագործակցությունն ապահովող մշտական հանձնաժողովի աշխատանքների արդյունավետ իրականացմանը:

3. Խորհրդի գործառույթներն են՝

ա) ֆակուլտետի և համապատասխան ձեռնարկությունների փոխգործակցության ռազմավարության մշակում, համապատասխան ծրագրերի իրականացում:

բ) ֆակուլտետի ուսանողների պրակտիկայի կազմակերպման աշխատանքներին աջակցության ցուցաբերում,

գ) գործընկեր կազմակերպությունների և ձեռնարկությունների տվյալների բազայի ստեղծում,

դ) ֆակուլտետի և ձեռնարկությունների միջև համագործակցության վարչակազմակերպչական, ֆինանսական և այլ հարցերի քննարկում և լուծում,

ե) ֆակուլտետի անձնակազմի կողմից գործընկեր կազմակերպություններին խորհրդատվությունների տրամադրում, նպատակային հետազոտությունների իրականացում,

զ) թափուր աշխատատեղերի և ուսանողների կարիերայի զարգացմանը նպաստող միջոցառումների մասին տեղեկատվության տարածում:

4. Խորհրդի նախագահը ի պաշտոնե ֆակուլտետի ղեկանն է, իսկ քարտուղարը՝ ղեկանի ներկայացմամբ ընտրվում է խորհրդի կողմից: Խորհրդի նիստերը հրավիրվում են ըստ անհրաժեշտության ֆակուլտետի ղեկանի կողմից՝ առնվազն կիսամյակը 2 անգամ:

5. Խորհրդի անդամների ընդհանուր թիվը սահմանվում է ֆակուլտետի գիտական խորհրդի կողմից՝ ելնելով տվյալ ֆակուլտետի առանձնահատկություններից: Խորհրդի անդամների առնվազն 1/3-ը պետք է լինեն գործընկեր ձեռնարկությունների և կազմակերպությունների ներկայացուցիչներ:

6. Խորհրդի կազմում ֆակուլտետների պրոֆեսորա-դասախոսական, վարչական անձնակազմի և գործընկեր ձեռնարկությունների, կազմակերպությունների, այդ թվում նրանց միավորումների ներկայացուցիչները առաջադրվում են ֆակուլտետի գիտական խորհրդի կողմից: Խորհրդի կազմում կարող են առաջադրվել ղեկանի տեղակալը, ֆակուլտետի գիտքարտուղարը, ամբիոնի վարիչները, կուրսերի խորհրդատուները (կուրատորները), պրակտիկայի ղեկավարները և պրոֆեսորադասախոսական անձնակազմի այլ ներկայացուցիչներ: Ֆակուլտետի Ուսանողական խորհրդի և Ուսանողական գիտական ընկերության կողմից Խորհրդի կազմում առաջադրվում է մեկական ներկայացուցիչ:

7. Խորհրդի ամբողջական կազմը ֆակուլտետի ղեկանի կողմից ներկայացվում է ԵՊՀ ռեկտորի հաստատմանը: Խորհրդի կազմը հաստատվում է 2 տարի ժամկետով: Խորհրդում որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ, բաց քվեարկությամբ: Խորհրդի նիստերն արձանագրվում են, արձանագրության վարումը իրականացնում է խորհրդի քարտուղարը:

8. Դեկանի հրավերով Խորհրդի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են մասնակցել համապատասխան կարգավիճակ կամ որակավորում ունեցող աշխատակիցներ և փորձագետներ:

9. Խորհրդի գործունեության վերաբերյալ ֆակուլտետի ղեկանը հաղորդում է ներկայացնում ֆակուլտետի խորհրդին ամենամյա հաշվետվություն ներկայացնելիս: